# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

**Հոկտեմբերի 1-ին, կիրակի. - Գ. կիր. զկնի Ս. Խաչի: Տօն է Վարագայ Սրբոյ Խաչի:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը: Հընթացս Ս. Պատարագի ձեռամբ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի կատարվեց քահանայական ձեռնադրություն, և քահանայական աստիճան ստացան ինը սարկավագներ (տե՛ս էջ 120): «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե'ս էջ 33):

**Հոկտեմբերի 8-ին, կիրակի. – Դ. կիր. զկնի Ս. Խաչի:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Փառեն եպիսկոպոս Ավետիքյանը: Հընթացս Ս. Պատարագի ձեռամբ Տ. Փառեն եպիսկոպոս Ավետիքյանի կատարվեց սարկավագական ձեռնադրություն (տե՛ս էջ 130): «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

**Հոկտեմբերի 15-ին, կիրակի. - Ե. կիր. զկնի Ս. Խաչի:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Վազգեն վարդապետ Նանյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

**Հոկտեմբերի 22-ին, կիրակի. – Զ. կիր. զկնի Ս. Խաչի:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Հովակիմ վարդապետ Մանուկյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

**Հոկտեմբերի 29-ին, երկուշաբթի. - Է. կիր. զկնի Ս. Խաչի: Գիւտ Խաչի:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Շնորհք ծայրագույն վարդապետ Գասպարյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

**Նոյեմբերի 5-ին, կիրակի. - Ը. կիր. զկնի Ս. Խաչի:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Աղան արքեպիսկոպոս Պալիոզյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

**Նոյեմբերի 11-ին, շաբաթ. – Սրբոց հրեշտակապետացն՝ Գաբրիէլի եւ Միքայէլի եւ ամենայն երկնային զօրացն:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Իսահակ աբեղա Պողոսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Զի հրեշ-

տակք նոցա յերկինս՝ hանապազ տեսանեն զերեսս Հօր Իմոյ՝ որ յերկինս...» (Մատթ. ԺԸ 10) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 35):

**Նոյեմբերի 12-ին, կիրակի. - Թ. կիր. զկնի Ս. Խաչի:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արարատ ծայրագույն վարդապետ Գալթագճյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

**Նոյեմբերի 19-ին, կիրակի. - Ժ. կիր. զկնի Ս. Խաչի:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Հընթացս հայրապետական Ս. Պատարագի ձեռամբ Նորին Սրբության կատարվեց եպիսկոպոսական ձեռնադրություն, որից հետո նորաօծ եպիսկոպոսներին հայրապետական իր պատգամն ուղղեց Վեհափառ Հայրապետը (տե՛ս էջ 111):

**Նոյեմբերի 23-ին, հինգշաբթի. - Դ. օր Յիսնակաց պահոց:**

Այսօր Մայր Տաճարում, Իջման Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Մարկոս եպիսկոպոս Հովհաննիսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Տուր զօրութիւն ծառայի Քո, կեցո զորդի աղախնոյ Քո, եւ արա առ իս նշան բարութեան» (Սղմ. ՁԵ 16-17) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 38):

**Նոյեմբերի 24-ին, ուրբաթ. - Ե. օր Յիսնակաց պահոց:**

Այսօր Մայր Տաճարում, Իջման Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

**Նոյեմբերի 26-ին, կիրակի. - Ա. կիր. Յիսնակաց:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ավետիս աբեղա Սահակյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Բայց, խնդրեցէք զարքայութիւնն Աստուծոյ եւ այն յաւելցի ձեզ» (Ղուկ. ԺԲ 31) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 40):